Հայտերի ներկայացման հրավեր

Հայաստանի Հանրապետություն

29 ապրիլի 2016 թ.

Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագիր

Վարկ No P148836

Պայմանագիր # TGQ-06/07

ՓԱԹԵԹ-1, Ճամբարակի թ3 մանկապարտեզի վերակառուցում

ՓԱԹԵԹ -2, Ծաղկաշենի միջնակարգ դպրոցի վերակառուցում

1. Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է ֆինանսավորում Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագրի համար և մտադիր է միջոցների մի մասն օգտագործել **«ՓԱԹԵԹ -1, Ճամբարակի թ3 մանկապարտեզի վերակառուցման» և «ՓԱԹԵԹ -2, Ծաղկաշենի միջնակարգ դպրոցի վերակառուցման»** պայմանագրի շրջանակներում վճարումներ իրականացնելու համար:

2. Սույնով **Գեղարքունիք մարզի, Ճամբարակ քաղաքի Ծրագրի Իրականացման Կոմիտեն և Գեղարքունիք մարզի, Ծաղկաշեն գյուղի Ծրագրի Իրականացման Կոմիտեն** հրավիրում են ներկայացնել կնքված փաթեթներ իրավասու մասնակիցներից՝ **«ՓԱԹԵԹ -1, Ճամբարակի թ3 մանկապարտեզի վերակառուցման» և «ՓԱԹԵԹ -2, Ծաղկաշենի միջնակարգ դպրոցի վերակառուցման» համար**:

Որակավորման պահանջները ներառում են.

ՓԱԹԵԹ -01

ա/ վերջին երեք տարիներից որևէ մեկ տարում հաջողությամբ կատարված **247.000.000** դրամի շին. աշխատանքների ծավալ, բ/ վերջին հինգը տարվա ընթացքում որպես գլխավոր կապալառու կատարած առնվազն երկու պայմանագրեր՝ քաղաքացիական շենքերի կառուցման կամ վերակառուցման: Ներկայացվող աշխատանքներից յուրաքանչյուրի արժեքը չպետք է պակաս լինի **139.000.000** ՀՀ դրամից, կամ մեկ պայմանագիր առնվազն **278.000.000** ՀՀ դրամ, գ/ նվազագույնը **27.000.000** դրամի իրացվելի միջոցներ և/կամ վարկային գիծ, դ/ որպես պայմանագրի շնորհման նախապայման, հայտատուն պետք է ներկայացնի ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված "**Քաղաքացիական**", "**Էներգետիկական**" և "**Հիդրոտեխնիկական**" լիցենզիաներ:

ՓԱԹԵԹ -02

ա/ վերջին երեք տարիներից որևէ մեկ տարում հաջողությամբ կատարված **247.000.000** դրամի շին. աշխատանքների ծավալ, բ/ վերջին հինգը տարվա ընթացքում որպես գլխավոր կապալառու կատարած առնվազն երկու պայմանագրեր՝ քաղաքացիական շենքերի կառուցման կամ վերակառուցման: Ներկայացվող աշխատանքներից յուրաքանչյուրի արժեքը չպետք է պակաս լինի **141.000.000** ՀՀ դրամից, կամ մեկ պայմանագիր առնվազն **282.000.000** ՀՀ դրամ, գ/ նվազագույնը **27.000.000** դրամի իրացվելի միջոցներ և/կամ վարկային գիծ, դ/ որպես պայմանագրի շնորհման նախապայման, հայտատուն պետք է ներկայացնի ՀՀ

Քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված “**Քաղաքացիական**”, “**Էներգետիկական**” և “**Հիդրոտեխնիկական**” լիցենզիաներ:

3. Մրցույթն իրականացվելու է Ազգային մրցակցային մրցույթի միջոցով, համաձայն Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ «*Ապրանքների, աշխատանքների և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ՄԶՎԲ փոխառությունների և Համաշխարհային բանկի վարկերի ու դրամաշնորհների փոխառուների կողմից*» Հունվար 2011 թ. վերանայված Հուլիս 2014 թ. «Գնումների ուղեցույցներ»: Բացի այդ, խնդրում ենք ծանոթանալ նաև 1.6 և 1.7 ենթակետերի հետ, որոնք սահմանում են Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով:

4. Շահագարգռված իրավասու մասնակիցները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամից և ուսումնասիրել Մրցութային փաստաթղթերը աշխատանքային ժամերին 10.00 – 17.00 հետևյալ հասցեով ք. Երևան, Կ.Ուլնեցու 31, 4-րդ հարկ, 407 սենյակ:

5. Շահագրգիռ իրավասու մասնակիցները Մրցութային փաստաթղթերն ամբողջությամբ Հայերեն լեզվով կարող են ստանալ վերոնշյալ հասցեով՝ վճարելով 3000 ՀՀ դրամ չվերադարձվող գումար: Վճարումն իրականացվում է բանկային փոխանցումով: Փաստաթղթերը տեղադրված են նաև www.gnumner.am կայքէջում:

6. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով ամենաուշը **2016 թ-ի մայիսի 27-ին, ժամը 12:00-ին**: Առաջարկները ***չեն կարող*** ներկայացվել էլեկտրոնային եղանակով: Ուշացված առաջարկները կմերժվեն: Մրցութային առաջարկները հրապարակայնորեն կբացվեն մրցույթի մասնակիցների նշանակված ներկայացուցիչների, ինչպես նաև բացմանը ներկա գտնվելու բոլոր ցանկացողների ներկայությամբ ստորև նշված հասցեով:

7. Բոլոր առաջարկները պետք է ուղեկցվեն մրցույթի ապահովման հայտարարագրով: Յուրաքանչյուր Փաթեթի հայտը պետք է ուղեկցվի առանձին Հայտի ապահովման հայտարարագրով:

8. Վերոնշյալ հասցեն է՝

ՓԱԹԵԹ -01, Ում. Արմեն Սարգսյան

Գեղարքունիք մարզի, Ճամբարակ քաղաքի Ծրագրի Իրականացման Կոմիտե

ՓԱԹԵԹ -02, Ում. Մերյոժա Սարգսյան

Գեղարքունիք մարզի, Ծաղկաշեն գյուղի Ծրագրի Իրականացման Կոմիտե

ՀՀ, Գեղարքունիք մարզ, ք. Ճամբարակ, Գ. Նժդեհի 125 /Քաղաքապետարան/